ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

§ 24. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԸ

1

Պլեբեյների պայքարի ձևը հետևյալն էր: Նրանք հեռանում էին Հռոմից և ճամբարում քաղաքից ոչ շատ հեռու: Հռոմում տնտեսական կյանքը և առևտուրը կանգ էին առնում՝ քաղաքը մնում էր առանց հացթուխների, կոշկակարների, զինագործների, դարբինների, առևտրականների: Նվազում էր բանակի թվաքանակը, վտանգվում էր Հռոմի պաշտպանությունը: Պատրիկները ստիպված էին զիջումների գնալ և բավարարել պլեբեյների որոշ պահանջները: Պայքարի այս ձևը կրկնվել է բազմիցս, մինչև պլեբեյները հասան վերջնական հաղթանակի:

2

«Սագերը փրկեցին Հռոմը»

Ըստ ավանդության, երբ գալլերը գրավեցին Հռոմ քաղաքը, հռոմեացիները ամրացան Կապիտոլիում բլրի միջնաբերդում: Խոր գիշերով գալլերը փորձեցին ժայռը մագլցել և, հռոմեացիներին հանկարծակիի բերելով, բացել ամրոցի դարպասները իրենց զորքի առաջ:

Միջնաբերդում էր գտնվում Հռոմի հովանավոր Յունոնա աստվածուհու տաճարը, որին հաջորդ առավոտյան զոհ մատուցելու համար հատուկ վանդակում հռոմեացիները առանձնացրել էին մոտ մեկ տասնյակ սագ: Սագերը գիշերը, գալլերի հայտնվելու ժամանակ, աղմուկ բարձրացրին: Աղմուկի շնորհիվ ժամապահները ժամանակին նկատեցին թշնամու հետախույզներին: Թշնամուն չհաջողվեց գրավել միջնաբերդը:

Այստեղից է առաջացել ***«Սագերը փրկեցին Հռոմը»*** թևավոր խոսքը, ինչը նշանակում է, որ ամեն մեկը իր արարքով կարող է փրկել հայրենիքը թշնամուց:

Լեգեոնի կառուցվածքը



Լեգեոնը շարվում էր կռվի 4 շարքով, ամեն շարքում մոտ 1200 զինվոր՝ բաժանված 10 ցենտուրիայի (հարյուրյակի): Ցենտուրիաները շարվում էին շախմատաձև և կռվի ժամանակ գործում էին ինքնուրույն: Առաջին շարքում կռվում էին նետ ու աղեղով կամ պարսատիկով զինված թեթևազենները: Մարտի սկզբում նրանք թշնամու վրա նետերի և քարերի տարափ էին տեղում, ապա հետ քաշվում դեպի թիկունք: Երկրորդ և երրորդ շարքերում կռվում էին երիտասարդ զինվորները, իսկ վերջին շարքում՝ տարեց, փորձառու վետերանները: Լեգեոնի թևերը պաշտպանում էր հեծելազորը: Ճկուն կառուցվածքի շնորհիվ լեգեոնը հաջողությամբ կարող էր կռվել ցանկացած տեղանքում: